ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎՁՄԲ ՎԱՐԿ 8615-AM

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31.12.2018թ.-ին ավարտող տարվա վերաբերյալ

Մարտ 2019
Երևան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՎՋՄԲ ՎԱՐԿ 8615-AM

Բովանդակություն

	էջ
Ղեկավարության պատասխանատվությունը հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման համար	3
Անկախ աուդիտորի եզրակացություն	4-6
Հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվություններ 31.12.2018թ.-ին ավարտված տարվա վերաբերյալ:	
Ծրագրային ծախսերի մասին հաշվետվություն՝ ըստ իրականացնող կազմակերպությունների	7
Ըստ կատեգորիաների ֆոնդերի ստացման մասին հաշվետվություն	8-9
Ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի ստացման մասին հաշվետվություն	10-11
Ստացված ֆոնդերի ամփոփում ըստ յուրաքանչյուր ՎՀՏ-ի	12
Դեպոզիտային հաշիվների մասին հաշվետվություն	13
Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	14

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ծրագիրը իրականացվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից՝ "Հայկական ատոմային էլեկտրակայան" ՓԲԸ-ի, "Երևանի ՋԷԿ" ՓԲԸ-ի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աջակցությամբ:
Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է "Էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի" (այսուհետ՝ Ծրագիր) հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որը ֆինանսավորվել է ՎԶՄԲ ՎԱՐԿ 8615-AM վարկային համաձայնագրով և որը ճշմարիտ է ներկայացնում ծրագրային ծախսերը՝ ըստ իրականացնող կազմակերպությունների, դրամական հոսքերը, ստացված ֆոնդերը և դեպոզիտային հաշիվների շարժը 31.12.2018թ.-ին ավարտված տարվա վերաբերյալ՝ Հաշվապահների Միջազգային Ֆեդերացիայի (ՀՄՖ) շրջանակներում գործող Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված "*Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով*" ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունք) և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների ֆինանսական կառավարման ձեռնարկի համաձայն (ՀԲ Ուղեցույցներ):

Հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է՝
• հաշվապահական հաշվառման քաղաքականության ճիշտ ընտրության եւ կիրառման համար,
• տեղեկատվություն ներկայացման համար՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, այնպես, որ այն ապահովի համապատասխան, հուսալի, համադրելի եւ հասկանալի տեղեկատվություն,
• 31.12.2018թ. ավարտված տարվա վերաբերյալ անհրաժեշտ լրացուցիչ բացահայտումների տրամադրում:
Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է ինչպես նաև՝
• Ծրագրի շրջանակներում ներքին վերահսկողության արդյունավետ եւ առողջ համակարգ մշակելու, իրականացնելու եւ պահպանելու համար.
• Ճշգրիտ հաշվապահական գրանցումների կատարման համար, որոնք բավարար են Ծրագրի գործառնությունները ներկայացնելու և բացատրելու համար և որոնք հնարավորություն են տալիս հավաստելու, որ Ծրագրի հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունքին և ՀԲ Ուղեցույցներին:
• Ծրագրի ակտիվների պահպանության և ստացված ֆոնդերի օգտագործումը ըստ 2016թ. մայիսի 12-ին ստորագրված ՎԶՄԲ ՎԱՐԿ 8615-AM Վարկային համաձայնագրի և Համաշխարհային բանկի Ուղեցույցների համաձայն հավաստելու համար հնարավոր քայլերի ձեռնարկման համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով խնայողությանը և արդյունավետությանը, և այն նպատակներին, որոնց համար տրամադրվել է ֆինանսավորում:
• Սխալների և խարդախությունների հայտնաբերման և կանխարգելման համար:

31 դեկտեմբերի 2018թ.-ին ավարտված տարվա վերաբերյալ Հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունները լիազորված են հրապարակման Ծրագրի ղեկավարության կողմից 25.03.2019թ.-ին:

Հակոբ Վարդանյան
ՀՀ ԷԵԲՊ նախարարի տեղակալ

Սասուն Խաչատրյան
«Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի
գլխավոր գործադիր տնօրեն

Սոկրատ Վարդանյան
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի
գլխավոր տնօրեն

Հեռ. +37460 526599
էլ. փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Էներգետիկ Ենթակառուցվածքների և Բնական Պաշարների Նախարարությանը (ԷԵԲՊՆ)

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել 12.05.2016թ. կնքված ՎԶՄԲ Վարկ 8615-AM Վարկային Համաձայնագրով (Վարկային Համաձայնագիր) ֆինանսավորվող և "Հայկական ատոմային էլեկտրակայան" ՓԲԸ-ի (ՀԱԷԿ), "Երևանի ջերմաէլեկտրակենտրոն" ՓԲԸ-ի (ԵՋԷԿ) և "Հայաստանի հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի" (ՀԾԿՀ) աջակցությամբ Հայաստանի Հանրապետության Էներգետիկ Ենթակառուցվածքների և Բնական Պաշարների Նախարարության (ԷԵԲՊՆ) կողմից իրականացվող "Էլեկտրաէներգետիկական Ոլորտի Ֆինանսական Առողջացման Ծրագրի" (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ծրագրային ծախսերի մասին հաշվետվությունը ըստ իրականացնող կազմակերպությունների, ըստ կատեգորիաների ֆոնդերի ստացման մասին հաշվետվությունը, ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի ստացման մասին հաշվետվությունը, ստացված ֆոնդերի ամփոփումը՝ ըստ յուրաքանչյուր ՎՀՑ-ի և դեպոզիտային հաշիվների մասին հաշվետվությունը 31.12.2018թ.-ին ավարտված տարվա վերաբերյալ, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:Մեր կարծիքով, հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 31.12.2018թ.-ին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն "*Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով*" Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունք):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) ներքո գործող Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱՈՄՄԽ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համարե պարբերությունում:

Մենք անկախ ենք Ծրագրից, ԷԵԲՊՆ-ի, ՀԱԷԿ-ից, ԵՋԷԿ-ից և ՀԾԿՀ-ից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է ՀՄԴ-ի Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՄԽ) կողմից հրապարակված "*Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով*" ՀՀՀՀՄ Ստանդարտների և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորված գործառնությունների ֆինանսական կառավարման ձեռնարկի (ՀԲ Ուղեցույց) համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն.

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Վարկային Համաձայնագրի պահանջների պահպանման նպատակով, Ծրագրի ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև կնքված Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
2. Ծրագրային ծախսերը, ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: ՀՏԶՀ-ի կողմից հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ ներկայացված համապատասխան հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական գրանցումներին:
3. Դեպոզիտային հաշիվը վարվել է համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:

Մեր կարծիքով, 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ծրագրի ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

Մենք նաև ստուգել ենք, որ ՀԲ-ի կողմից արգելված անձանց Ծրագրի շրջանակներում չեն շնորհվել պայմանագրեր՝ Ծրագրի սկզբից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

25 մարտի 2019թ

Վահագն Մախսկյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտոր

BDO

Էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր
ՎՋՄԲ ՎԱՐԿ 8615-ԱՄ
Ծրագրային ծախսերի մասին հաշվետվություն՝ ըստ իրականացնող կազմակերպությունների
31.12.2018թ.-ին ավարտված տարվա վերաբերյալ
(Գումարները ներկայացված են ԱՄՆ դոլարով)

Ծրագրային ծախսեր	Փաստացի*		Նախատեսված	Կատարողական
	Հաշվետու ժամանակա-շրջան	Աճողական առ 31.12.2018	Ծրագրի աճողական	Աճողական, %
«Հայկական ատոմային էլեկտրական» ՓԲԸ				
Առևտրային վարկերի վերաֆինանսավորում	-	8,525,191	8,525,191	100%
	-	**8,525,191**	**8,525,191**	100%
«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ				
Բնական գազի դիմաց կրեդիտորական պարտքի մարում («Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Երևանի ԳԳՄ» մասնաճյուղի նկատմամբ կրեդիտորական պարտքը գազի մատակարարման գծով՝ ոչ արդյունաբերական նպատակներով էլեկտրաէներգիա արտադրելու համար)	-	18,807,670	16,973,996	111%
Գազի տուրբինի կապիտալ վերանորոգում	15,584,667	20,661,173	12,821,981	161%
Առևտրային վարկերի վերաֆինանսավորում	-	4,604,073	4,603,522	100%
Ծրագրի աուդիտ և ՑՀԱ	45,512	86,961	300,000	29%
	15,630,179	**44,159,877**	**34,699,499**	**127%**
Ընդամենը	**15,630,179**	**52,685,068**	**43,224,690**	**122%**

(*) ՀՀ դրամով վճարված փաստացի գումարները փոխարկված են ԱՄՆ դոլարի բազային ամսաթվի փոխարժեքով, այն է՝ 1 փետրվարի 2016թ.(Ծան 2.3):

Հակոբ Վարդանյան
ՀՀ ԷԵԲՊ նախարարի տեղակալ

Սասուն Խաչատրյան
«Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի
գլխավոր գործադիր տնօրեն

Սոմսես Վարդանյան
«Հայկական ատոմային
էլեկտրական» ՓԲԸ-ի
գլխավոր տնօրեն

25 մարտի 2019թ.

14-21 էջերի կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր
ՎՋՄԲ ՎԱՐԿ 8615-AM
Ըստ կատեգորիաների ֆոնդերի ստացման մասին հաշվետվություն
31.12.2018թ.-ին ավարտված տարվա վերաբերյալ
(Գումարները ներկայացված են ԱՄՆ դոլարով)

	Փաստացի		Նախատեսված		Շեղում	
	Հաշվետու ժամանակա-շրջան	Ամբողջական առ 31.12.2018	Հաշվետու ժամանակա-շրջան	Ամբողջական առ 31.12.2018	Հաշվետու ժամանակա-շրջան	Ամբողջական առ 31.12.2018
ՎՀՑ կանխավճարի սկզբնական չմարված մնացորդ	**2,340,000**	-				
ՖՈՆԴԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ						
ՎՋՄԲ ՎԱՐԿ 8615-AM	830,000	26,939,595				
«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի համաֆինանսավորում	16,607,567	21,861,124				
Ընդամենը	**17,437,567**	**48,800,719**				
ԱՌՀԱՆՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ						
(1) ՎՀՑ#1: Բաժնետերերի ժողովի որոշում	-	**2,832,000**	-	**2,832,000**	-	-
ԵՋԷԿ	-	2,024,880	-	2,024,880	-	-
ՀԱԷԿ	-	807,120	-	807,120	-	-
(2) ՎՀՑ #2: «Հայգազարդ» ՓԲԸ-ի լուծարում	**500,000**	**1,500,000**	**500,000**	**1,500,000**	-	-
ԵՋԷԿ	357,500	1,072,500	357,500	1,072,500	-	-
ՀԱԷԿ	142,500	427,500	142,500	427,500	-	-
(3) ՎՀՑ#3: ՀԱԷԿ-ի հիմնական գործունեության հետ չկապված ծախսեր	**200,000**	**2,100,000**	**200,000**	**2,100,000**	-	-
ԵՋԷԿ	143,000	1,501,500	143,000	1,501,500	-	-
ՀԱԷԿ	57,000	598,500	57,000	598,500	-	-
(4) ՎՀՑ #4: ԵՋԷԿ-ի հիմնական գործունեության հետ չկապված ծախսեր	**200,000**	**2,100,000**	**200,000**	**2,100,000**	-	-
ԵՋԷԿ	143,000	1,501,500	143,000	1,501,500	-	-
ՀԱԷԿ	57,000	598,500	57,000	598,500	-	-
(5) ՎՀՑ #5: ՀԱԷԿ-ի վարկի մայր գումարի նվազեցում	-	**4,259,595**	-	**4,260,000**	-	**(405)**
ԵՋԷԿ	-	3,045,611	-	3,045,900	-	(289)
ՀԱԷԿ	-	1,213,984	-	1,214,100	-	(116)
(6) ՎՀՑ #6: ԵՋԷԿ-ի վարկի մայր գումարի նվազեցում	-	**2,300,000**	-	**2,300,000**	-	-
ԵՋԷԿ	-	1,644,500	-	1,644,500	-	-
ՀԱԷԿ	-	655,500	-	655,500	-	-
(7) ՎՀՑ #7: Գազի գծով ԵՋԷԿ -ի առկա կրեդիտորական պարտքի նվազեցում	-	**4,982,000**	-	**4,982,000**	-	-
ԵՋԷԿ	-	3,562,130	-	3,562,130	-	-
ՀԱԷԿ	-	1,419,870	-	1,419,870	-	-

Էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր
ՎԶՄԲ ՎԱՐԿ 8615-AM
Ըստ կատեգորիաների ֆոնդերի ստացման մասին հաշվետվություն
31.12.2018թ.-ին ավարտված տարվա վերաբերյալ
(Գումարները ներկայացված են ԱՄՆ դոլարով)

	Փաստացի		Նախատեսված		Շեղում	
	Հաշվետու ժամանակա-շրջան	Աճողական առ 31.12.2018	Հաշվետու ժամանակա-շրջան	Աճողական առ 31.12.2018	Հաշվետու ժամանակա-շրջան	Աճողական առ 31.12.2018
(8) ՎՀՑ #8: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար ՀԷՑ-ի սակագնային մարժան	**200,000**	**1,600,000**	**200,000**	**1,600,000**	**-**	**-**
ԵՋԷԿ	143,000	1,144,000	143,000	1,144,000	-	-
ՀԱԷԿ	57,000	456,000	57,000	456,000	-	-
(9) ՎՀՑ #9: ԵՋԿ-ի և Հրազդան ՋԷԿ-ի սակագները	**200,000**	**1,600,000**	**200,000**	**1,600,000**	**-**	**-**
ԵՋԷԿ	143,000	1,144,000	143,000	1,144,000	-	-
ՀԱԷԿ	57,000	456,000	57,000	456,000	-	-
(10) ՎՀՑ #10: ԵՋԷԿ-ի կողմից մատակարարվող էլեկտրաէներգիայի պահպանումը	**1,630,000**	**3,351,000**	**1,630,000**	**3,351,000**	**-**	**-**
ԵՋԷԿ	1,165,450	2,395,965	1,165,450	2,395,965	-	-
ՀԱԷԿ	464,550	955,035	464,550	955,035	-	-
(11) Նախնական վճար	**-**	**75,000**	**-**	**75,000**	**-**	**-**
ԵՋԷԿ	-	*53,625*	-	*53,625*	-	-
ՀԱԷԿ	-	*21,375*	-	*21,375*	-	-
ԵՋԷԿ-ի գազի տուրբինի վերազինում	**16,607,567**	**21,861,124**	**8,148,184**	**13,224,690**	**8,459,383**	**8,636,434**
ԵՋԷԿ	16,607,567	21,861,124	8,148,184	13,224,690	8,459,383	8,636,434
Ընդամենը	**19,537,567**	**48,560,719**	**11,078,184**	**39,924,690**	**8,459,383**	**8,636,029**
ՎՀՑ կանխավճարի վերջնական չմարված մնացորդ	**240,000**	**240,000**				

Հակոբ Վարդանյան
ՀՀ ԷԵԲՊ նախարարի տեղակալ

Սասուն Խաչատրյան
«Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի
գլխավոր գործադիր տնօրեն

Մովսես Վարդանյան
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի
գլխավոր տնօրեն

25 մարտի 2019թ.

14-21 էջերի կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր
ՎՋՄԲ ՎԱՐԿ 8615-AM
Ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի ստացման մասին հաշվետվություն
31.12.2018թ.-ին ավարտված տարվա վերաբերյալ
(Գումարները ներկայացված են ԱՄՆ դոլարով)

Ծրագրի բաղադրիչներ	Փաստացի		Նախատեսված		Շեղում	
	Հաշվետու ժամանակաշրջան	Աճողական առ 31.12.2018	Հաշվետու ժամանակաշրջան	Աճողական առ 31.12.2018	Հաշվետու ժամանակաշրջան	Աճողական առ 31.12.2018
Ա. Հիմնական գործունեության հետ չկապված դրամական հոսքերի կրճատում	**900,000**	**8,532,000**	**900,000**	**8,532,000**	-	-
Ա.1. Հիմնական գործունեության հետ չկապված ծախսեր	**400,000**	**7,032,000**	**400,000**	**7,032,000**	-	-
ԵՋԷԿ	*286,000*	*5,027,880*	*286,000*	*5,027,880*	-	-
ՀԱԷԿ	*114,000*	*2,004,120*	*114,000*	*2,004,120*	-	-
Ա.2. «Հայգազարդ» Պետական ՓԲԸ-ի լուծարումը	**500,000**	**1,500,000**	**500,000**	**1,500,000**	-	-
ԵՋԷԿ	357,500	1,072,500	357,500	1,072,500	-	-
ՀԱԷԿ	142,500	427,500	142,500	427,500	-	-
Բ. Թանկ վարկերի կրճատում	-	**6,559,595**	-	**6,560,000**	-	**(405)**
ԵՋԷԿ	-	4,690,111	-	4,690,400	-	(289)
ՀԱԷԿ	-	1,869,484	-	1,869,600	-	(116)
Գ. ԵՋԷԿ-ի պարտքի մարումը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Երևանի ԳԳՄ» մասնաճյուղի նկատմամբ	-	**4,982,000**	-	**4,982,000**	-	-
ԵՋԷԿ	-	3,562,130	-	3,562,130	-	-
ՀԱԷԿ	-	1,419,870	-	1,419,870	-	-
Դ. Սակագների ձևափոխում՝ ուղղված էլեկտրամատակարարման ծախսերի ամբողջական արտացոլմանը	**400,000**	**3,200,000**	**400,000**	**3,200,000**	-	-
Դ.1. Amendment of ENA's license to allow tariff adjustment related to cost of electricity purchased	**200,000**	**1,600,000**	**200,000**	**1,600,000**		
ՀԷՑ-ի լիցենզիայի փոփոխություն՝ ուղղված էլեկտրաէներգիայի ձեռքբերման արժեքի սակագների մեջ ճշգրտումներ անելուն					-	-
ԵՋԷԿ	143,000	1,144,000	143,000	1,144,000	-	-
ՀԱԷԿ	57,000	456,000	57,000	456,000	-	-
Դ.2. Սակագների սահմանման մեթոդաբանության վերանայում՝ կապված արտարժույթով գազի ձեռքբերման հետ	**200,000**	**1,600,000**	**200,000**	**1,600,000**	-	-
ԵՋԷԿ	143,000	1,144,000	143,000	1,144,000	-	-
ՀԱԷԿ	57,000	456,000	57,000	456,000	-	-
Ե. ԵՋԿ-ի գազատուրբինի գեներացնող հզորության պահպանում	**1,630,000**	**3,351,000**	**1,630,000**	**3,351,000**	-	-
ԵՋԷԿ	1,165,450	2,395,965	1,165,450	2,395,965	-	-
ՀԱԷԿ	464,550	955,035	464,550	955,035	-	-

Էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր
ՎԶՄԲ ՎԱՐԿ 8615-AM
Ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի ստացման մասին հաշվետվություն
31.12.2018թ.-ին ավարտված տարվա վերաբերյալ
(Գումարները ներկայացված են ԱՄՆ դոլարով)

Ծրագրի բաղադրիչներ	Փաստացի		Նախատեսված		Ընդում	
	Հաշվետու ժամանակա-շրջան	Աճողական առ 31.12.2018	Հաշվետու ժամանակա-շրջան	Աճողական առ 31.12.2018	Հաշվետու ժամանակա-շրջան	Աճողական առ 31.12.2018
Նախնական վճար	-	75,000	-	75,000	-	-
ԵՋԷԿ	-	53,625	-	53,625	-	-
ՀԱԷԿ	-	21,375	-	21,375	-	-
ԵՋԿ-ի գազի տուրբինի վերանորոգում	16,607,567	21,861,124	8,148,184	13,224,690	-	-
ԵՋԷԿ	16,607,567	21,861,124	8,148,184	13,224,690	-	-
Ընդամենը	19,537,567	48,560,719	11,078,184	39,924,690	8,459,383	8,636,029

Հակոբ Վարդանյան
ՀՀ ԷԵԲՊ նախարարի տեղակալ

Սասուն Խաչատրյան
«Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի
գլխավոր գործադիր տնօրեն

Սովսեպ Վարդանյան
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի
գլխավոր տնօրեն

25 մարտի 2019թ.

14-21 էջերի կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր
ՎՋՄԲ ՎԱՐԿ 8615-AM
Ստացված ֆոնդերի ամփոփում ըստ յուրաքանչյուր ՎՀՑ-ի
31.12.2018թ.-ին ավարտված տարվա վերաբերյալ
(Գումարները ներկայացված են ԱՄՆ դոլարով)

Դիմում #	Ամսաթիվ	ՎՀՑ Կանխավճար/ (կանխավճարի մարում)	Գրանցված հառուցումներ												Ընդամենը վճարված
			(1) ՎՀՑ#1: Բաժնետերերի ժողովի որոշում	(2) ՎՀՑ #2. «Հայգազարդ» ՓԲԸ-ի լուծարում	(3) ՎՀՑ #3. ՀԱԷԿ-ի հիմնական գործունեության հետ չկապված ծախսեր	(4) ՎՀՑ #4. ԵՋԿ-ի հիմնական գործունեության հետ չկապված ծախսեր	(5) ՎՀՑ #5. ՀԱԷԿ-ի վարկի մայր գումարի նվազեցում	(6) ՎՀՑ #6: ԵՋԿ-ի վարկի մայր գումարի նվազեցում	(7) ՎՀՑ #7: Գազի գծով ՀԱԷԿ-ի նկատմամբ առկա կրեդիտորական պարտքի նվազեցում	(8) ՎՀՑ #8: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար ՀԷՑ-ի տակագնային մարժան	(9) ՎՀՑ #9: ԵՋԿ-ի և Հրազդան ՋԷԿ-ի տակագները	(10) ՎՀՑ #10: ԵՋԷԿ-ի կողմից ճատակաբարվող էլեկտրաէներգիայի սպառումը	(11) Նախնական վճար	Ընդամենը փաստաթղթավորված	
7-Y	08.02.2018	(1,015,300)	-	357,500	-	-	-	-	-	-	-	1,165,450	-	1,522,950	507,650
7-A	08.02.2018	(404,700)	-	142,500	-	-	-	-	-	-	-	464,550	-	607,050	202,350
8-Y	07.09.2018	(486,200)	-	-	143,000	143,000	-	-	-	143,000	143,000	-	-	572,000	85,800
8-A	07.09.2018	(193,800)	-	-	57,000	57,000	-	-	-	57,000	57,000	-	-	228,000	34,200
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համար		(2,100,000)	-	500,000	200,000	200,000	-	-	-	200,000	200,000	1,630,000	-	2,930,000	830,000
Կուտակային 31.12.2018		240,000	2,832,000	1,500,000	2,100,000	2,100,000	4,259,595	2,300,000	4,982,000	1,600,000	1,600,000	3,351,000	75,000	26,699,595	26,939,595

(*) «Ե»-ով նշված առհանումների դիմումները վերաբերում են ԵՋԷԿ-ին, «Ա»- ով՝ ՀԱԷԿ-ին:

Հակոբ Վարդանյան
ՀՀ ԷԵԲՊ նախարարի տեղակալ

Սասուն Խաչատրյան
«Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի
գլխավոր գործադիր տնօրեն

Սովսես Վարդանյան
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի
գլխավոր տնօրեն

25 մարտի 2019թ.

14-21 էջերի կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր
ՎՋՄԲ ՎԱՐԿ 8615-ԱՄ
Դեպոզիտային հաշիվների մասին հաշվետվություն
31.12.2018թ.-ին ավարտված տարվա վերաբերյալ
(Գումարները ներկայացված են ԱՄՆ դոլարով)

Կազմակերպություն	ԵՋԷԿ	ՀԱԷԿ
Բանկի դեպոզիտային հաշվի համար	900000902438	900000902453
Բանկ	ՀՀ Կենտրոնական Գանձապետարան	
Հասցե	0010, ՀՀ, Ք. Երևան, Մելիք Աղամյան 1	
Հաշվի արժույթ	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար

	ԵՋԷԿ	ՀԱԷԿ	Ընդամենը
	31.12.2018 ավարտված տարվա վերաբերյալ		
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
1. Սկզբնական մնացորդ 01.01.2018թ. դրությամբ	-	0.71	0.71
2. *Ավելացում.* Սկզբնական տարբերություն	-	-	-
3. ՀԲ ֆոնդի կանխավճար/համալրում	593,450.00	236,550.00	830,000.00
4. Նվազեցում. դեպոզիտային հաշվից վերադարձ ՀԲ-ին	-	-	-
5. Դեպոզիտային հաշվին համալրված գումարը	**593,450.00**	**236,550.71**	**830,000.71**
6. Հատուկ հաշվի վերջնական մնացորդն առ 31.12.2018թ.	-	0.71	0.71
7. *Ավելացում.* վճարված ընդունելի ծախսերի գումար	593,450.00	236,550.00	830,000.00
8. *Նվազեցում.* Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են դեպոզիտային հաշիվ)	-	-	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	**593,450.00**	**236,550.71**	**830,000.71**
10. Վերջնական տարբերություն (5)-(9)	-	-	-

Հակոբ Վարդանյան
ՀՀ ԷԵԲՊ նախարարի տեղակալ

Սասուն Խաչատրյան
«Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի
գլխավոր գործադիր տնօրեն

Մովսես Վարդանյան
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի
գլխավոր տնօրեն

25 մարտի 2019թ.

14-21 էջերի կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագիր

Էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիրը (Ծրագիր) իրականացվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016թ.-ի փետրվարի 18-ի N 6 որոշման հիման վրա: Ծրագրի նպատակն է ապահովել ՀՀ էլեկտրաէներգիայի պատշաճ և հուսալի մատակարարում՝ էլեկտրաէներգիա արտադրող պետական ընկերությունների և էլեկտրաէներգիայի բաշխիչ մասնավոր ընկերության ֆինանսական վիճակը բարելավելու միջոցով:
Ծրագիրը իրականացվեում է ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության միջոցով՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աջակցությամբ:
Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 43,224,690 ԱՄՆ դոլար, որից 30,000,000 ԱՄՆ դոլարի ֆինանսավորումը կատարվելու է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) միջև 2016 մայիսի 12-ին ստորագրված 8615-AM Վարկային համաձայնագրի շրջանակներում:
Վարկի վճարման արժույթը՝ ԱՄՆ դոլարն է (USD).
ՎԶՄԲ ՎԱՐԿ 8615-AM վարկի մարման ժամկետը 30 հուլիսի 2021թ. է:

Առհանման դիմումի ներկայացման արտոնյալ ժամանակահատվածը փակման ամսաթվից առաջ կատարված ծախսերի համար փակման ամսաթվից վեց ամիս հետո է՝ 2022 թ. Հունվարի 31-ը:

1.2 Կից համաձայնագրեր

Ըստ վարկային համաձայնագրի՝ ՀԱԷԿ-ը վարկային միջոցներից ստանում է 28.5%-ը և ԵՋԷԿ-ը՝ 71.5%-ը պայմանավորված Վարկային պայմանագրի 2-րդ հավելվածի IV.A.2 աղյուսակով եւ համապատասխան ստուգման գործընթացում վճարման համար հիմք հանդիսացող արդյունքներով (ՎՀԱ) և/կամ վճարման համար հիմք հանդիսացող ցուցանիշներով (ՎՀՑ):
Այս նպատակով ՀՀ Ֆինանսների նախարարության (ՀՀ ՖՆ) և ՀԱԷԿ-ի, ՀՀ ՖՆ և ԵՋԷԿ-ի միջև կնքվել են կից համաձայնագրեր 2016թ. հունիսի 14-ին, ըստ որոնց կազմակերպությունները համապատասխանաբար կստանան 8,550,000 ԱՄՆ դոլար և 21,450,000 ԱՄՆ դոլար ենթավարկեր, եթե կատարվեն վարկային համաձայնագրի պահանջները:

1.3 Ծրագրի նպատակը

Ծրագիրը կազմված է հետևյալ բաղադրիչներից՝

Ա. Պետական սեփականություն հանդիսացող էլեկտրաէներգիա արտադրող ընկերություններում հիմնական գործունեության հետ չկապված դրամական արտահոսքերի վերացում. (i) ՀԱԷԿ-ի և ԵՋԷԿ-ի հիմնական գործունեության հետ չկապված ծախսերի, վարկերի և փոխառությունների արգելում, և (ii) «Հայգազարդ» ՓԲԸ-ի լուծարումը:
Բ. Թանկարժեք առեւտրային վարկերի կրճատում եւ դեբիտորական պարտքերի մարում. (i) Լրացուցիչ նամակում թվարկված ՀԱԷԿ-ի և ԵՋԷԿ-ի առևտրային վարկերի հիմնական գումարների վերաֆինանսավորում և (ii) ՀԱԷԿ-ի եւ ՀՋԷԿ-ի կողմից Հայաստանի էլեկտրական ցանցերին (ՀԷՑ) մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց դեբիտորական պարտքերի մարում:
Գ. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ մասնաճյուղի նկատմամբ ԵՋԷԿ-ի կրեդիտորական պարտքի մարում ըստ պայմանագրի համաձայն N 3 Լրացուցիչ նամակի:

Դ. Սակագների վերանայում՝ էլեկտրաէներգիայի մատակարարման ծախսերը ամբողջությամբ արտացոլելու համար. (i) ՀԷՑ-ի լիցենզիայի փոփոխություն, որը թույլ կտա ՀԷՑ-ի կողմից ձեռք բերված էլեկտրաէներգիայի փաստացի եւ նախատեսված արժեքների միջեւ անհամապատասխանության պատճառով սակագնային մարժայի ճշգրտում կատարել կորստի (շահույթի) ամբողջ չափով, և (ii) սակագնի սահմանման մեթոդաբանության վերանայում, որը թույլ կտա կարգավորել սակագինը ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանման հետևանքով առաջացած բնական գազի գնման հետ կապված կորստի (շահույթի) ամբողջ չափով:
Ե. ԵՋԷԿ-ի համակցված ցիկլի գազատուրբինային կայանի (ՀՑԳԿ) գազի տուրբինի որոշակի բաղադրիչների փոխարինման միջոցով գազի տուրբինի արտադրության հզորության պահպանում:

1.4. Ծրագրի բյուջեն

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն են՝

- ՎԶՄԲ ՎԱՐԿ 8615-AM
- ԵՋԷԿ-ի ներստեղծված միջոցները

Ծրագրի կատեգորիաները	ՎԶՄԲ վարկ 8615-AM	ԵՋԷԿ	Ընդամենը
	ԱՄՆ դոլարին	ԱՄՆ դոլարին համարժեք	ԱՄՆ դոլարին համարժեք
(1) ՎՀՑ#1: Բաժնետերերի ժողովի որոշում	2,832,000	-	2,832,000
(2) ՎՀՑ #2: «Հայգազարդ» ՓԲԸ-ի լուծարումը	2,000,000	-	2,000,000
(3) ՎՀՑ #3: ՀԱԷԿ-ի հիմնական գործունեության հետ չկապված ծախսեր	2,500,000	-	2,500,000
(4) ՎՀՑ #4: ԵՋԷԿ-ի հիմնական գործունեության հետ չկապված ծախսեր	2,500,000	-	2,500,000
(5) ՎՀՑ #5: ՀԱԷԿ-ի վարկի մայր գումարի նվազեցում	4,260,000	-	4,260,000
(6) ՎՀՑ #6: ԵՋԷԿ -ի վարկի մայր գումարի նվազեցում	2,300,000	-	2,300,000
(7) ՎՀՑ #7: Գազի գծով ԵՋԷԿ-ի առկա կրեդիտորական պարտքի նվազեցում	4,982,000	-	4,982,000
(8) ՎՀՑ #8: Ցուրաքանչյուր ժամանակահատվածի համար ՀԷՑ-ի սակագնային մարժան	2,000,000	-	2,000,000
(9) ՎՀՑ #9: ԵՋԷԿ -ի և Հրազդան ՋԷԿ-ի սակագներ	2,000,000	-	2,000,000
(10) ՎՀՑ #10: ԵՋԷԿ -ի կողմից մատակարարվող էլեկտրաէներգիայի պահպանումը	4,551,000	-	4,551,000
ԵՋԷԿ-ի գազի տուրբինի վերազինում	-	13,224,690	13,224,690
Նախնական վճար	75,000	-	75,000
Ընդամենը	**30,000,000**	**13,224,690**	**43,224,690**

1.5 Ծրագրի իրականացումը

Ծրագիրը իրականացվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության միջոցով՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աջակցությամբ (միասին՝ «Ծրագրի ղեկավարություն»):

ՀՀ ԷԵԲՊ նախարարության հասցեն է՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Փավստոս Բուզանդ փողոց 2:
ԵՋԷԿ-ի հասցեն է 0053, ՀՀ, ք. Երևան, Արին Բերդ 3-րդ փողոց, շենք 3:
ՀԱԷԿ-ի հասցեն է՝ 0910, ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր:
ՀՀ ՀԾԿՀ հասցեն է 0002, ՀՀ, ք. Երևան Սարյան փողոց 22 շենք:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) ներքո գործող Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄԱԽ) կողմից հրապարակված *«Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով»* Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների և ներկայացվել են. Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորված գործառնությունների ֆինանսական կառավարման ձեռնարկի համաձայն (մարտ 2010) RM 3 – ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և աուդիտ:
Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

2.2 Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունք

Ծրագրի ֆինանսավորումը ճանաչվում է որպես ծրագրի ֆոնդ, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է: Ծրագրային ծախսերը ճանաչվում են որպես Ծրագրի ֆոնդերի օգտագործում երբ վճարումները կատարվել են:

2.3 Ներկայացման արժույթը

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD): ՀՀ դրամով կամ Եվրոյով ստացված համաֆինանսավորումը և կատարված ծախսերը փոխարկվում են ԱՄՆ դոլարի գործարքի օրվա ՀՀ ԿԲ փոխարժեքով:
Այնուամենայնիվ, Ծրագրային ծախսերի մասին հաշվետվության՝ ըստ իրականացնող կազմակերպությունների, ներկայացման համար ԱՄՆ դոլարով չկատարված ծախսերը փոխարկվում են հաշվետու տարում գերակայող ՀՀ ԿԲ փոխարկման փոխարժեքներով, քանի որ այդ փոխարժեքը կիրառվում է ձեռք բերված արդյունքների վերաբերյալ համապատասխանության գնահատման համար, որը չափվում է ՎՀՑ-ներով (Ծանոթագրություն 1.2), որոնց դրամական շեմերը որոշվում են ԱՄՆ դոլարի հիմքում ընկած արժույթով:

ՀՀ ԿԲ կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքները հետևյալն են.

Ամսաթիվ	ԱՄՆ դոլար	Եվրո
1 փետրվարի2016	489.16	531.03
31 դեկտեմբերի 2017	484.10	580.10
31 դեկտեմբերի 2018	483.75	553.65

3. Վարկային միջոցների առհանումը

Ծրագրի կատեգորիաներ	Ամողական առհանում առ 31.12.2018 ԱՄՆ դոլար	Ծրագրի ամողական ընդհանուր բյուջեն ԱՄՆ դոլար	Կատարող-ական %
(1) ՎՀՑ#1: Բաժնետերերի ժողովի որոշում	2,832,000	2,832,000	100%
(2) ՎՀՑ #2: «Հայգազարդ» ՓԲԸ-ի լուծարումը	1,500,000	2,000,000	75%
(3) ՎՀՑ #3: ՀԱԷԿ-ի հիմնական գործունեության հետ չկապված ծախսեր	2,100,000	2,500,000	84%
(4) ՎՀՑ #4: ԵՋԷԿ-ի իմնական գործունեության հետ չկապված ծախսեր	2,100,000	2,500,000	84%
(5) ՎՀՑ #5: ՀԱԷԿ-ի վարկի մայր գումարի նվազեցում	4,259,595	4,260,000	100%
(6) ՎՀՑ #6: ԵՋԷԿ -ի վարկի մայր գումարի նվազեցում	2,300,000	2,300,000	100%
(7) ՎՀՑ #7: Գազի գծով ԵՋԷԿ-ի առկա կրեդիտորական պարտքի նվազեցում	4,982,000	4,982,000	100%
(8) ՎՀՑ #8: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար ՀԷՑ-ի սակագնային մարժան	1,600,000	2,000,000	80%
(9) ՎՀՑ #9: ԵՋԷԿ -ի և Հրազդան ՋԷԿ-ի սակագներ	1,600,000	2,000,000	80%
(10 ՎՀՑ #10: ԵՋԷԿ -ի կողմից մատակարարվող էլեկտրաէներգիայի պահպանումը	3,351,000	4,551,000	74%
ԵՋԷԿ -ի գազի տուրբինի վերազինում	21,861,124	13,224,690	165%
Նախնական վճար	75,000	75,000	100%
Ընդամենը	**48,560,719**	**43,224,690**	**112%**

4. Ֆինանսավորում

4.1. ՎԶՄԲ ՎԱՐԿ 8615-AM

	Հաշվետու ժամանակաշրջան ԱՄՆ դոլար	Ամողական առ 31.12.2018 ԱՄՆ դոլար
ՎՀՑ կանխավճար/ (կանխավճարի մարում)	(2,100,000.00)	240,000.00
ՎՀՑ վճարում	2,930,000.00	26,624,595.49
Նախնական վճար	-	75,000.00
Ընդամենը	**830,000.00**	**26,939,595.49**
Ֆինանսավորման բյուջե՝ ընդամենը		**30,000,000**
31.12.2018թ.-ի դրությամբ հատկացված ֆինանսավորման տոկոսը		**90%**

4.2. Համաֆինանսավորում ԵՋԷԿ-ի կողմից

	Հաշվետու ժամանակաշրջան ԱՄՆ դոլար	Ամողական առ 31.12.2018թ. ԱՄՆ դոլար
Դրամական միջոցներով	16,607,567	21,861,124
Ֆինանսավորման բյուջե՝ ընդամենը		**13,224,690**
31.12.2018թ.-ի դրությամբ հատկացված ֆինանսավորման տոկոսը		**165%**

5. ՎՀՑ/ ՎՀԱ-ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

ՎՀՑ	ՎՀԱ	Իրականացման ընթացքը առ 31.12. 2018	Համապատասխան հաստատման գործընթացը	Վարկի տեղաբաշխված գումարը (ԱՄՆ դոլար)	Վարկի կուտակային հատկացված գումարը առ 31.12.2018 (ԱՄՆ դոլար)
(1) ՎՀՑ#1: Բաժնետերերի ժողովի որոշում	ՎՀԱ #1: ՀԱԷԿ-ի և ԵՋԷԿ-ի բաժնետերերը հանդիպել են և որոշում կայացրել արգելել իրենց հիմնական գործունեության հետ չկապված ծախսերի կատարումը	Իրականացվել է 30.06.2016թ.	Հաստատվել է ՀԲ-ի կողմից 16.08.2016թ.	2,832,000	2,832,000
(2) ՎՀՑ #2: «Հայգազարդ» ՓԲԸ-ի լուծարումը	ՎՀԱ#2.1: «Հայգազարդ» ՓԲԸ-ի բաժնետերերը հանդիպել են և (i) կայացրել որոշում լուծարվելու մասին, և (ii) հաստատել են լուծարման նախագիծը	Իրականացվել է 31.12.2016 թ.	Հաստատվել է ՀԲ-ի կողմից 16.02.2017թ.	1,000,000	1,000,000
	ՎՀԱ#2.2: Նշանակված լուծարման հանձնաժողովը ավարտել է Ընկերության ակտիվների վերգնահատումը	Իրականացվել է 31.12.2017թ.	Հաստատվել է ՀԲ-ի կողմից 24.01.2018թ.	500,000	500,000
	ՎՀԱ#2.3: «Հայգազարդ» ՓԲԸ-ի լուծարումն ավարտված է և գրանցված Իրավաբանական Անձանց Պետական Ռեգիստրի Գործակալությունում			500,000	-
	Ընդամենը			**2,000,000**	**1,500,000**
(3) ՎՀՑ #3: ՀԱԷԿ-ի հիմնական գործունեության հետ չկապված ծախսեր	ՎՀԱ#3.1: ՀԱԷԿ-ը չի կատարել իր հիմնական գործունեության հետ չկապված որևէ նոր ծախս, փոխառություններ և վարկերի տրամադրում 2016թ. ֆինանսական տարվա համար	Իրականացվել է 31.12.2016 թ.	Հաստատվել է ՀԲ-ի կողմից 11.07.2017թ.	1,900,000	1,900,000
	ՎՀԱ#3.2: ՀԱԷԿ-ը չի կատարել իր հիմնական գործունեության հետ չկապված որևէ նոր ծախս, փոխառություններ և վարկերի տրամադրում 2017թ. ֆինանսական տարվա համար	Իրականացվել է 31.12.2017 թ.	Հաստատվել է ՀԲ-ի կողմից 16.08.2018թ.	200,000	200,000
	ՎՀԱ#3.3: ՀԱԷԿ-ը չի կատարել իր հիմնական գործունեության հետ չկապված որևէ նոր ծախս, փոխառություններ և վարկերի տրամադրում 2018թ. ֆինանսական տարվա համար			200,000	-
	ՎՀԱ#3.4: ՀԱԷԿ-ը չի կատարել իր հիմնական գործունեության հետ չկապված որևէ նոր ծախս, փոխառություններ և վարկերի տրամադրում 2019թ. ֆինանսական տարվա համար			200,000	-
	Ընդամենը			**2,500,000**	**2,100,000**
(4) ՎՀՑ #4: ԵՋԿ-ի հիմնական գործունեության հետ չկապված ծախսեր	ՎՀԱ#4.1: ԵՋԷԿ-ը չի կատարել իր հիմնական գործունեության հետ չկապված որևէ նոր ծախս, փոխառություններ և վարկերի տրամադրում 2016թ. ֆինանսական տարվա համար	Իրականացվել է 31.12.2016 թ.	Հաստատվել է ՀԲ-ի կողմից 11.07.2017թ.	1,900,000	1,900,000
	ՎՀԱ#4.2: ԵՋԷԿ-ը չի կատարել իր հիմնական գործունեության հետ չկապված որևէ նոր ծախս, փոխառություններ և վարկերի տրամադրում 2017թ. ֆինանսական տարվա համար	Իրականացվել է 31.12.2017 թ.	Հաստատվել է ՀԲ-ի կողմից 16.08.2018թ.	200,000	200,000
	ՎՀԱ#4.3: ԵՋԷԿ-ը չի կատարել իր հիմնական գործունեության հետ չկապված որևէ նոր ծախս, փոխառություններ և վարկերի տրամադրում 2018թ. ֆինանսական տարվա համար			200,000	-
	ՎՀԱ#4.4: ԵՋԷԿ-ը չի կատարել իր հիմնական գործունեության հետ չկապված որևէ նոր ծախս, փոխառություններ և վարկերի տրամադրում 2019թ. ֆինանսական տարվա համար			200,000	-
	Ընդամենը			**2,500,000**	**2,100,000**

ՎՀՁ	ՎՀԱ	Իրականացման ընթացքը առ 31.12. 2018	Համապատասխան հաստատման գործընթացը	Վարկի տեղաբաշխված գումարը (ԱՄՆ դոլար)	Վարկի կուտակային հատկացված գումարը առ 31.12.2018 (ԱՄՆ դոլար)
(5) ՎՀՁ #5: ՀԱԷԿ-ի վարկի մայր գումարի նվազեցում	ՎՀԱ#5.1: ՀԱԷԿ-ը նվազեցրել է չմարված առևտրային վարկերի մայր գումարների հիմնական մասը առնվազն 2,172,000 ԱՄՆ դոլարով 01.02.2016-11.05.2016 թթ. ընթացքում:	Իրականացվել է 11.05.2016 թ.	Հաստատվել է ՀԲ-ի կողմից 16.08.2016թ.	1,086,000	1,085,595
	ՎՀԱ#5.2: ՀԱԷԿ-ը նվազեցրել է չմարված առևտրային վարկերի մայր գումարների հիմնական մասը առնվազն 2,828,000 ԱՄՆ դոլարով 12.05.2016-31.12.2016թթ. ընթացքում:	Իրականացվել է 30.06.2016 թ., մարված են նշված բո;որ վարկերը		1,414,000	1,414,000
	ՎՀԱ#5.3: ՀԱԷԿ-ը նվազեցրել է չմարված առևտրային վարկերի մայր գումարների հիմնական մասը առնվազն 3,520,000 ԱՄՆ դոլարով 2017թ. ֆինանսական տարվա ընթացքում. ընթացքում:			1,760,000	1,760,000
	Ընդամենը			**4,260,000**	**4,259,595**
(6) ՎՀՁ #6: ԵՋԷԿ-ի վարկի մայր գումարի նվազեցում	ՎՀԱ#6.1: ԵՋԷԿ-ը նվազեցրել է չմարված առևտրային վարկերի մայր գումարների հիմնական մասը առնվազն 1,000,000 ԱՄՆ դոլարով 01.02.2016-30.06.2016թթ. ընթացքում:	Իրականացվել է 11.05.2016 թ.	Հաստատվել է ՀԲ-ի կողմից 06.09.2016թ.	500,000	500,000
	ՎՀԱ#6.2: ԵՋԷԿ-ը նվազեցրել է չմարված առևտրային վարկերի մայր գումարների հիմնական մասը առնվազն 1,600,000 ԱՄՆ դոլարով 01.07.2016-31.12.2016. ընթացքում :	Իրականացվել է 10.08.2016 թ., մարված են նշված բո;որ վարկերը		800,000	800,000
	ՎՀԱ#6.3: ԵՋԷԿ-ը նվազեցրել է չմարված առևտրային վարկերի մայր գումարների հիմնական մասը առնվազն 3,520,000 ԱՄՆ դոլարով 2017թ. ֆինանսական տարվա ընթացքում:			1,000,000	1,000,000
	Ընդամենը			**2,300,000**	**2,300,000**
(7) ՎՀՁ #7: Գազի գծով ԵՋԷԿ-ի առկա կրեդիտորական պարտքի նվազեցում	ՎՀԱ#7.1: ԵՋԷԿ-ի կրեդիտորական պարտքերն սույն Պայմանագրի գծով նվազել են10,861,961,848 ՀՀ դրամով 12.05.2016թ. դրությամբ:	Իրականացվել է 11.05.2016 թ.	Հաստատվել է ՀԲ-ի կողմից 16.08.2016թ.	780,000	780,000
	ՎՀԱ#7.2: ԵՋԷԿ-ի կրեդիտորական պարտքերն սույն Պայմանագրի գծով նվազել են 10,661,961,848 ՀՀ դրամով 30.06.2016թ. դրությամբ:	Իրականացվել է 30.06.2016 թ.		120,000	120,000
	ՎՀԱ#7.3: ԵՋԷԿ-ի կրեդիտորական պարտքերն սույն Պայմանագրի գծով նվազել են 9,661,961,848 ՀՀ դրամով 31.12.2016թ. դրությամբ			600,000	600,000
	ՎՀԱ#7.4: ԵՋԷԿ-ի կրեդիտորական պարտքերն սույն Պայմանագրի գծով նվազել են 8,161,961,848 ՀՀ դրամով 30.06.2017թ. դրությամբ:			900,000	900,000
	ՎՀԱ#7.5: ԵՋԷԿ-ի կրեդիտորական պարտքերն սույն Պայմանագրի գծով նվազել են 6,661,961,848 ՀՀ դրամով 31.12.2017թ. դրությամբ:			1,200,000	1,200,000
	ՎՀԱ#7.6: ԵՋԷԿ-ի կրեդիտորական պարտքերն սույն Պայմանագրի գծով նվազել են 5,161,961,848 ՀՀ դրամով 31.12.2018թ. դրությամբ:			600,000	600,000
	ՎՀԱ#7.7: ԵՋԷԿ-ի կրեդիտորական պարտքերն սույն Պայմանագրի գծով նվազել են 4,161,961,848 ՀՀ դրամով 31.12.2019թ. դրությամբ:			600,000	600,000
	ՎՀԱ#7.8: ԵՋԷԿ-ի կրեդիտորական պարտքերն սույն Պայմանագրի գծով նվազել են 3,858,961,848ՀՀ դրամով 31.12.2020թ. դրությամբ:			182,000	182,000
	Ընդամենը			**4,982,000**	**4,982,000**

ՎՀՑ	ՎՀԱ	Իրականացման ընթացքը առ 31.12. 2018	Համապատասխան հաստատման գործընթացը	Վարկի տեղաբաշխված գումարը (ԱՄՆ դոլար)	Վարկի կուտակային հատկացված գումարը առ 31.12.2018 (ԱՄՆ դոլար)
(8) ՎՀՑ #8: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար ՀԷՑ-ի սակագնային մարժան	ՎՀԱ#8.1: 30.06.2016թ. ՀԷՑ-ի լիցենզիան փոփոխվել է ՀՇԿՀ-ի կողմից , և ՀԷՑ-ի սակագնային մարժան ճշգրտվել է 31.12.2016թ.:	Իրականացվել է 30.06.2016թ.	Հաստատվել է ՀՌ-ի կողմից 16.08.2016թ.	1,000,000	1,000,000
	ՎՀԱ#8.2: ՀԷՑ-ի սակագնային մարժան ճշգրտվել է 31.12.2017թ.:	Իրականացվել է 01.02.2017թ.	Հաստատվել է ՀՌ-ի կողմից 11.07.2017թ.	400,000	400,000
	ՎՀԱ#8.3: ՀԷՑ-ի սակագնային մարժան ճշգրտվել է 31.12.2018թ.:	Իրականացվել է 20.06.2018թ.	Հաստատվել է ՀՌ-ի կողմից 16.08.2018թ.	200,000	200,000
	ՎՀԱ#8.4: ՀԷՑ-ի սակագնային մարժան ճշգրտվել է 31.12.2019թ.:			200,000	-
	ՎՀԱ#8.5: ՀԷՑ-ի սակագնային մարժան ճշգրտվել է 31.12.2020թ.:			200,000	-
	Ընդամենը			**2,000,000**	**1,600,000**
ՎՀՑ #9: ԵՋԿ-ի և Հրազդան ՋԷԿ-ի սակագներ	ՎՀԱ#9.1: Սակագների հաշվարկման մեթոդաբանությունը վերանայվում է ՀՇԿՀ-ի կողմից 30.06.2016թ., և յուրաքանչյուր նոր սակագնային ժամանակահատվածի համար ԵՋԷԿ-ի և Հրազդան ՋԷԿ-ի սակագները վերանայվում են ՀՇԿՀ-ի կողմից 31.12.2016թ.:	Իրականացվել է 30.06.2016թ.	Հաստատվել է ՀՌ-ի կողմից 16.08.2016թ.	1,000,000	1,000,000
	ՎՀԱ#9.2: յուրաքանչյուր նոր սակագնային ժամանակահատվածի համար ԵՋԷԿ-ի և Հրազդան ՋԷԿ-ի սակագները վերանայվում են ՀՇԿՀ-ի կողմից 31.12.2017թ.:	Իրականացվել է 01.02.2017թ.	Հաստատվել է ՀՌ-ի կողմից 11.07.2017թ.	400,000	400,000
	ՎՀԱ#9.3: յուրաքանչյուր նոր սակագնային ժամանակահատվածի համար ԵՋԷԿ-ի և Հրազդան ՋԷԿ-ի սակագները վերանայվում են ՀՇԿՀ-ի կողմից 31.12.2018թ :	Իրականացվել է 20.06.2018թ.	Հաստատվել է ՀՌ-ի կողմից 16.08.2018թ.	200,000	200,000
	ՎՀԱ#9.4: յուրաքանչյուր նոր սակագնային ժամանակահատվածի համար ԵՋԷԿ-ի և Հրազդան ՋԷԿ-ի սակագները վերանայվում են ՀՇԿՀ-ի կողմից 31.12.2019թ :			200,000	-
	ՎՀԱ#9.5: յուրաքանչյուր նոր սակագնային ժամանակահատվածի համար ԵՋԷԿ-ի և Հրազդան ՋԷԿ-ի սակագները վերանայվում են ՀՇԿՀ-ի կողմից 31.12.2020թ :			200,000	-
	Ընդամենը			**2,000,000**	**1,600,000**
(10) ՎՀՑ #10: ԵՋԷԿ-ի կողմից մատակարարվող էլեկտրաէներգիայի պահպանումը	ՎՀԱ#10.1: ԵՋԷԿ-ը 2016թ. ֆինանսական տարվա ընթացքում էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցին մատակարարել է առնվազն1400կՎտժ էլեկտրաէներգիա:	Իրականացվել է	Հաստատվել է ՀՌ-ի կողմից 16.02.2017թ.	1,721,000	1,721,000
	ՎՀԱ#10.2: ԵՋԷԿ-ը 2017թ. ֆինանսական տարվա ընթացքում էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցին մատակարարել է առնվազն1400կՎտժ էլեկտրաէներգիա	Իրականացվել է 31.12.2017թ	Հաստատվել է ՀՌ-ի կողմից 24.01.2018թ.	1,630,000	1,630,000
	ՎՀԱ#10.3: ԵՋԷԿ-ը 2018թ. ֆինանսական տարվա ընթացքում էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցին մատակարարել է առնվազն1400կՎտժ էլեկտրաէներգիա			400,000	-
	ՎՀԱ#10.4: ԵՋԷԿ-ը 2019թ. ֆինանսական տարվա ընթացքում էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցին մատակարարել է առնվազն1400կՎտժ էլեկտրաէներգիա			400,000	-
	ՎՀԱ#10.5: ԵՋԷԿ-ը 2020թ. ֆինանսական տարվա ընթացքում էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցին մատակարարել է առնվազն1400կՎտժ էլեկտրաէներգիա			400,000	-
	Ընդամենը			**4,551,000**	**3,351,000**
(11) Նախնական վճար	Կիրառելի չէ	Կիրառելի չէ	Կիրառելի չէ	**75,000**	**75,000**
Ընդամենը				**30,000,000**	**23,769,595**

6. Ծրագրային ծախսերը համապատասխան արժույթով

Ծրագրային ծախսեր	Փաստացի	
	Հաշվետու տարի ավարտվող 31.12.2018թ.	Կուտակային առ 31.12.2018թ.
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ		
Առևտրային վարկերի վերաֆինանսավորում	-	EUR 2,000,000.00
	-	USD 6,354,000.00
«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ		
Բնական գազի դիմաց կրեդիտորական պարտքի մարում («Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Երևանի ԳԳՄ» մասնաճյուղի նկատմամբ կրեդիտորական պարտքը գազի մատակարարման գծով՝ ոչ արդյունաբերական նպատակներով էլեկտրաէներգիա արտադրելու համար)	-	AMD 9,199,959,708.00
Գազի տուրբինի կապիտալ վերանորոգում	EUR 14,355,866.55	EUR 19,032,106.55
Առևտրային վարկերի վերաֆինանսավորում	-	USD 650,000.00
	-	EUR 3,642,307.45
Ծրագրի առուղիտ և ՑՀԱ	AMD 22,262,515.07	AMD 42,537,955.07

7. Վարկային միջոցների օգտագործումը ԵՋԷԿ-ի և ՀԱԷԿ-ի կողմից

Օգտագործված միջոցների բնույթը	ԵՋԷԿ	ՀԱԷԿ	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Վարկի միջոցների օգտագործում			
Կուտակային առ 01.01.2018			
Էներգիայի մատակարարման դիմաց վճարում	13,924,625	6,982,669	**20,907,294**
Առևտրային վարկի մնացորդի մարում	4,690,111	-	**4,690,111**
ՋերմաԷլեկտրոկենտրոնի տեխնիկական պահպանություն	-	368,963	**368,963**
	18,614,736	**7,351,632**	**25,966,368**
Հաշվետու տարի ավարտված 31.12.2018թ.			
Էներգիայի մատակարարման դիմաց վճարում	593,450	304,778	**898,228**
	593,450	**304,778**	**898,228**
Կուտակային առ 31.12.2018			
Էներգիայի մատակարարման դիմաց վճարում	14,518,075	7,287,447	**21,805,522**
Առևտրային վարկի մնացորդի մարում	4,690,111	-	**4,690,111**
Կայանի շահագործում և պահպանում	-	368,963	**368,963**
	19,208,186	**7,656,410**	**26,864,596**
Ստացված միջոցներ			
Կուտակային առ 01.01.2018	18,614,736	7,419,860	**26,034,596**
Ավարտված տարի 31.12.2018	593,450	236,550	**830,000**
	19,208,186	**7,656,410**	**26,864,596**
Չօգտագործված մնացորդ			
Կուտակային առ 01.01.2018	-	**68,228**	**68,228**
Ավարտված տարի 31.12.2018	-	-	-

8. Դատական հայցեր

Հաշվետու ամսաթվի և այս ֆինանսական հաշվետվության հաստատման ամսաթվի դրությամբ Ծրագրի դեմ ներկայացված դատական հայցեր չկան: